

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ
ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Գ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Ա. Հովսեփյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Ա. Բադալյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար

Հրավիրվածներ՝

Հ. Մարգարյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Հ. Քեչիշյան	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացնող թիմի ղեկավար
Ք. Ղալեյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավաբան

1. Տրանշ-2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի Հողերի օտարման և տարարնա կեցման ծրագրի (ՀՕՏԾ) իրականացման միջոցառումները ներկայացնելու և հավանություն տալու մասին

(Ա. Հովսեփյան, Ն. Երիցյան, Գ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

8. Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել՝

1) ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանին՝ աջակցել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա.Հովսեփյանին՝ ապահովելով շրջիկ նոտարական ծառայությունների պատշաճ մատուցումը.

2) «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝

ա. ՀՕՏԾ-ի ընթացքն ապահովելու նպատակով ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանին տրամադրել Թալինի ճանապարհահատվածի (շուրջ 7-կմ) օտարվող հողերի և գույքի վերաբերյալ տեղեկատվությունը,

բ. կատարել ուսումնասիրություններ սոցիոլոգիական կազմակերպությունների շրջանում (առնվազն 4 այլընտրանքային կազմակերպություններում) և ըստ այդմ խորհրդի նիստում ներկայացնել ուսումնասիրությունների ամփոփված արդյունքները:

գ. հստակ տարանջատել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի և կառավարման խորհրդի լիազորությունները և կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացնել միայն կառավարման խորհրդի լիազորությունների շրջանակներում հաստատման ենթակա հարցերը:

3) Արագածոտնի մարզպետ Ս. Սահակյանին՝ աջակցել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ին՝ ՀՕՏԾ-ի իրականացման աշխատանքներում.

4) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Ե. Զախարյանին՝ աջակցել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ին՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում նշանակելով արագ արձագանքման պատասխանատուներ:

2. Տրանշ-1 (Երևան-Արարատ և Երևան-Աշտարակ) ճանապարհահատվածների 2012 թվականին իրականացվող շինարարական աշխատանքների ծավալների քննարկում

(Ա. Հովսեփյան, Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրով 2012 թվականին իրականացվող շինարարական աշխատանքների ծավալների մասին տեղեկատվությունը:

3. Տրանշ-3 Թալին-Գյումրի ճանապարհահատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապատրաստական փուլի քննարկում

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն, որ Տրանշ-3 Թալին-Գյումրի ճանապարհահատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապատրաստական փուլի աշխատանքներն ընթացքի մեջ են:

4. Այլ հարցեր

(Ա. Հովսեփյան, Ն. Երիցյան, Մ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ (ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՆՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ